ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/67, 15.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56

Գնման առարկան՝ աուդիտորական ծառայության ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

№ 21
14.04.22

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Բողոք բերող՝ «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան Հանրապետության 22,
16 տարածք, 5-րդ հարկ
հեռ: (+374 10) 544 301/307/309
Էլ.փոստ՝ info@bakertillyarmenia.com

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
Հեռախոս +374 93 074480
Էլ. փոստ info@epromotion.am

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56» ծածկագրով գնանշման հարցում

Բողոք

- **Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.**

✓ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56 ծածկագրով գնանշման հարցում /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

✓ Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրի համաձայն՝ աուդիտը պետք է իրականացվի «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված աուդիտորական կազմակերպությունների կողմից:

✓ Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, որի գնային առաջարկը կազմում է 2 650 000 ՀՀ դրամ:

✓ Գնահատող հանձնաժողովի 07.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4.3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տվյալները «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված աուդիտորական կազմակերպությունների ցանկից բացակայում են:

✓ Նույն արձանագրության 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

✓ Տվյալ Ընթացակարգով հաղթող մասնակից է ճանաչվել «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն իր 1 575 000 ՀՀ դրամ գնային առաջարկով:

✓ Անգործության ժամկետը սահմանվել է մինչև 12.04.2022թ. ներառյալ:

✓ Բողոքը ներկայացնելու պահի դրությամբ ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքված չէ:

✓ Թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով դատարանի կողմից 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմամբ **արգելվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ թիվ ԱԾ №054 «Աուդիտորական ծառայությունների իրականացման» լիցենզիան: Նույն որոշմամբ որոշվել է պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը)**:

✓ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-Լ0-2022/01 որոշմամբ բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՎԴ/1299/05/21 վարչական գործով դատարանի կողմից 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը, արձանագրել է հետևյալը. «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը նույնական է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված աուդիտորական կազմակերպությունների ցանկում գրանցված լինելուն: Բողոքներ քննող անձը արձանագրել է, որ ՎԴ/1299/05/21 վարչական գործով դատարանի կողմից 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին տալիս է աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք առանց «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված լինելու: Այս հիմքով դադարեցվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը մերժելու գնահատող հանձնաժողովի որոշումը:

- ***<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) **գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.**

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, **ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք**:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու

առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ **Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է,** որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրի համաձայն՝ աուդիտը պետք է իրականացվի «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված աուդիտորական կազմակերպությունների կողմից:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, որի գնային առաջարկը կազմում է 2 650 000 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովի 07.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4.3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տվյալները «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված աուդիտորական կազմակերպությունների ցանկից բացակայում են:

«Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական ծառայություններ կարող է իրականացնել միայն այն ***աուդիտորական կազմակերպությունը, որը ունի լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիա:***

«Աուդիտորական գործունեության մասին» 2019թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (այսուհետ՝ ռեեստր):

Այսպիսով, «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն ընկերությանը աուդիտորական գործունեությամբ զբաղվելու, աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք տալիս էր լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված լիցենզիան, իսկ 2019թ. օրենքի համաձայն՝ նման իրավունքը առաջանում է, եթե նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում:

2021թ. «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ իրավահարաբերության առկայությունը ճանաչելու պահանջով (թիվ ՎԴ/1299/05/21 գործ):

Ներկայացված վարչական գործով «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը 15.03.2021թ. դիմել է դատարանին՝ հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ: Նշված միջնորդությամբ ՓԲԸ-ն նշել է, որ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ըստ 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՕ-283-Ն օրենքի 30-րդ հոդվածի, այն աուդիտորական կազմակերպությունը, որը չի անդամակցում մասնագիտացված կառույցներին, **իրավունք չունի մատուցելու աուդիտորական ծառայություններ,** գտնում ենք, որ մինչև սույն գործով վեճն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելը էականորեն կդժվարեցնի դատական ակտի կատարումը, քանի որ միջոցներ չձեռնարկելը կարող է բերել այնպիսի իրավիճակի, որ

Ընկերությունը չի կարող իրականացնել իր միակ տնտեսական գործունեությունը: Ամբողջ վերոգրյալը առաջացնում է հիմնավոր ռիսկեր, որ հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելու դեպքում բարձր է հավանականությունը, որ Ընկերությունը կկրի զույքային վնասներ: Ընդ որում, նման հայցի ապահովում ձեռնարկելը կլինի այն անհրաժեշտ ու համաչափ միջոցը, որը թույլ չի տա, որ Ընկերությանը զգալի վնասներ պատճառվեն մինչև սույն գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումներով, հաշվի առնելով, որ նշված հայցի ապահովման միջոցները չձեռնարկելու արդյունքում Ընկերության համար վրա հասնելիք հնարավոր անբարենպաստ հետևանքները դժվարեցնելու են, մինչև անգամ կարող են անհնարին դարձնել սույն գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարումը՝ ընկերությունը միջնորդել է կիրառել համապատասխան հայցի ապահովման միջոցներ:

Դատարանը 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմամբ **արգելել է ՀՀ ֆինանսների նախարարությանը պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ թիվ ԱԾ №054 «Աուդիտորական ծառայությունների իրականացման» լիցենզիան: Նույն որոշմամբ որոշվել է պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը)**:

Հայցվոր ընկերության կողմից նման հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու նպատակն ակնհայտ է, որ եղել է ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար իրավական երաշխիք ունենալը (վերոհիշյալ հիմնավորումը առկա է որոշման պատճառաբանական մասում): Հենց դրան է կոչված նաև հայցի ապահովման դատավարական ինստիտուտը՝ դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի իրավունքները և օրինական շահերը:

«Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական կազմակերպություն է համարվում *աուդիտորական ծառայություններ իրականացնող իրավաբանական անձը:*

Նույն օրենքի համաձայն՝ աուդիտորական ծառայությունների իրականացման հիմքը հանդիսանում է լիազորված մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի առկայությունը:

Այլ կերպ ասած, «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական ծառայություններ կարող է իրականացնել միայն այն ***աուդիտորական կազմակերպությունը, որը ունի լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիա:***

Հենց այս տրամաբանությամբ է Դատարանի կողմից բավարարվել «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության 15.03.2021թ. հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը և որոշվել արգելել ՀՀ ֆինանսների նախարարությանը պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ թիվ ԱԾ №054 «Աուդիտորական ծառայությունների իրականացման» լիցենզիան և պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը):

Բանն այն է, որ լիցենզիա ունենալու կարգավիճակի պահպանությունը «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի տրամաբանությամբ նշանակում է, որ աուդիտորական կազմակերպությունը ունի իրավունք իրականացնելու աուդիտորական գործունեություն: Համապատասխանաբար, կազմակերպությունը չի կարող ունենալ իրավունք զբաղվելու աուդիտորական գործունեությամբ, եթե չպահպանվի իր՝

լիցենզիա ունենալու կարգավիճակը, քանի որ աուդիտորական գործունեությամբ զբաղվելու իրավունքը բխում է լիզենզիա ունենալու կարգավիճակից:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ լիցենզիա ունենալու կարգավիճակի պահպանությունը իր մեջ ներառում է, կլանում աուդիտորական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Վերոհիշյալը բխում է հենց Դատարանի 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման տրամաբանությունից, քանի որ նման հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման նպատակն ակնհայտ է, որ եղել է ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար իրավական երաշխիք ունենալը: Հենց դրան է կոչված նաև հայցի ապահովման դատավարական ինստիտուտը՝ դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի իրավունքները և օրինական շահերը:

Նույնը արձանագրվել է նաև Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 իրավապարտադիր որոշմամբ, որով բողոքներ քննող անձը հիմք ընդունելով ՎԴ/1299/05/21 վարչական գործով դատարանի կողմից 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը արձանագրել է հետևյալը. «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը նույնական է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված աուդիտորական կազմակերպությունների ցանկում գրանցված լինելուն: Բողոքներ քննող անձը արձանագրել է, որ ՎԴ/1299/05/21 վարչական գործով դատարանի կողմից 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին տալիս է աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք առանց «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված լինելու: Այս հիմքով դադարեցվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը մերժելու գնահատող հանձնաժողովի որոշումը:

Գտնում ենք, որ թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով Դատարանի 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 իրավապարտադիր որոշման պայմաններում և դրանց լույսի ներքո գնահատող հանձնաժողովի 07.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4.3 արձանագրության 5-րդ կետի 1-ին ենթակետով կայացրած որոշումը՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, իրավաչափ չէ:

Վերոհիշյալով գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 7-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ բողոքներ քննող անձ,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ **նախքան պայմանագրի կնքումը** բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Հայտնում ենք, որ սույն բողոքը ներկայացնելու պահին "ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56" ծածկագրով ընթացակարգով պայմանագիր դեռևս չի կնքվել:

Միևնույն ժամանակ տվյալ ընթացակարգի արդյունքում «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտի մերժումը հակասում է թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով Դատարանի 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմանը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 իրավապարտադիր որոշմանը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ներկայացված բողոքով չի խաթարվում տվյալ ընթացակարգը, չի վերանայվելու հաղթող մասնակիցը, քանի որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ավելի բարձր է, քան հաղթող մասնակցի՝ «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի գնային առաջակը:

Հենց այս տրամաբանությամբ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն գտնում է, որ անհրաժեշտություն չկա նաև բողոքարկման արդյունքում կասեցնել սույն բողոքով վիճարկվող "ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56" ծածկագրով ընթացակարգը:

Սույն բողոքարկման նպատակն է ընդամենը թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով Դատարանի 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 իրավապարտադիր որոշման պայմաններում ոչ իրավաչափ ճանաչել հայտը մերժելու հիմքը՝ այսուհետ պատվիրատուների կողմից նույնատիպ պրակտիկա ապահովելու և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 որոշման իրավապարտադիրությունը ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձին խնդրում ենք.

1. Վարույթ ընդունել սույն բողոքը՝ հնարավորություն ընձեռնելով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին պաշտպանել իր խախտված իրավունքները,

2. Չկասեցնել ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-22/56 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Կից ներկայացվում է՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:

2. «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Փ. Գևորգյանի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

3. «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի գնային առաջարկը:

4. Գնահատող հանձնաժողովի 07.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4.3 արձանագրությունը:

Հարգանքով՝

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի

Գլխավոր տնօրեն

Վարչության Նախագահ _____ Փ.Գևորգյան

14.04.2022թ.